



ԱՄՓՈՓ ՁԵԿՈՅՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ*

ԱՊՐԻԼ - ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1997

Գոհութիւն Աստուծոյ, որ շնորհ ըրաւ Մեկի անցնող Ապրիլ ամիսէն առդին, շուրջ 9 ամիսներուն ընթացքին, գլխաւորել և յառաջ տանիլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան սպասաւորութիւնը հայ ժողովուրդին, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Կը յիշէք բոլորդ ալ, որ անցնող Ապրիլի 4-7-ի ժամանակամիջոցին, Մեր ընտրութեան և գահակալութեան երկրորդ տարեդարձին, Մայր Աթոռոյս մէջ ունեցանք իր տեսակին մէջ առաջին ժողովը Թեմակալ Սոաջնորդներու և Թեմական ազգային-եկեղեցական իշխանութեանց աշխարհական ներկայացուցիչներու, մասնակցութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդի այս լիակատար նիստին, երբ կը ներկայացնենք ամփոփ վեկոյցը անցնող ամիսներու գործունէութեան, չենք կրնար փառք չտալ Աստծուն, որ շնորհեց ինձի և իմ բոլոր գործակիցներուն այստեղ՝ Մայր Աթոռի և Թեմերուն մէջ, բարի արդիւնքներու առատ հունձքով պսակուած տեսնել մեր բոլորի ճիգերը որպէս հաւատարիմ ծառայութիւն Աստուծոյ, մեր Ս. Եկեղեցիին, մեր հայրենիքին և մեր ողջ հայ ժողովրդեան:

Ապրիլէն առդին Մեր առողջական վիճակն ալ չեղաւ այնպէս բնականոն ինչպէս էր նախապէս: Աջ ոտքի ջիղերու և մկաններու թուլացումը լուրջ դժուարութիւններու ենթարկեց Մեզ: Հակառակ այդ իրողութեան, ջանացինք և Մեր գերագոյն կարելին ի գործ դրինք հովանաւորելու, քաջալերելու և կատարելու այն ինչ որ դուք յատկօրէն կրնաք տեսնել 'ն դատել այս ուրուագծային պատկերին մէջ:

* Ներկայացուած Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ժողովին 16-19 Դեկտեմբեր 1997:

Ա

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռի Միաբանական ներքին կեանքը յառաջ գնաց բնականոն գործունեությամբ, եռուն ընթացքով, ինչպես վայն նկարագրած էինք Մեր երկամեայ տեղեկագրին մէջ անցնող Ապրիլին:

Մեծ փոփոխութիւններ տեղի չունեցան: Կը յիշատակենք միայն հետևեալները. —

Հայր Դերենիկ արեղայ Դաթեանը և Հայր Բարսեղ արեղայ Փիլաւչեանը նշանակեցինք հոգևոր հովիւ Իջևանի և Ստեփանաւանի համար, Գուգարաց Թեմին մէջ:

Հոգեջնորհ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահեանը յաջողութեամբ աւարտելէ ետք իր երկամեայ բարձրագոյն աստուածաբանական ուսումը Հռոմի Արևելեան Ուսմանց Կեդրոնի մէջ (Oriental Pontifical Institute) վերադարձաւ Մայր Աթոռ: Ձինք նշանակեցինք որպէս պատասխանատու այն սարկաւագաց դասին, որոնք, լեւո շրջանաւարտութեան Հոգևոր Ժեմարանի 2 յսարանէն, կը շարունակեն իրենց ուսումը ասարտաճառերու պատրաստութեան աշխատանքով և Մայրավանքի մէջ կամ Թեմերու մէջ ստանձնելով որոշ պարտաւորութիւններ՝ Վեհարանին, Բրիտոնիական Դաստիարակութեան Կեդրոնին, Մայր Տաճարին, Գանձատան մէջ և այլուրեք Հայաստանի Թեմերուն մէջ: Իրեն վստահեցանք նաև որոշ առաքելութիւններ, ինչպէս Կայկաթայի Մարդասիրական Ժեմարանի համար սաներ ընտրելու և անոնց հարցերով վրադելու գործը: Երկիցս ճամբորդութիւններ կատարեց ի Կայկաթա այդ առաքելութեամբ:

Հայր Մաշտոց արեղայ Ժողովեանը ուղարկեցինք Վիեննա, որպէս ուսանող և օգնական Աւստրիոյ Հայոց Առաջնորդին: Ծրագիր ունինք յառաջիկայ տարի ևս ուսանողներ ուղարկելու արտասահման, աստուածաբանական ուսմանց մէջ խորանայու համար:

Հայր Տրդատ արեղայ Մարտիրոսեանը նշանակեցինք հոգևոր հովիւ Պոլկարիոյ Թեմին Ռուսսէ քաղաքի հայահոծ համայնքին:

Հայր Մովսէս վրդ. Մովսէսեանը, որ Մայր Աթոռ էր վերադարձած Մոսկուայի մէջ իր հովուական պաշտօնէն, նշանակեցինք տեսուչ-վանահայր Ա. Հռիփսիմէ վանքին:

Հռիփսիմէի վանքի նախորդ տեսուչը՝ Հայր Վրթանէս վրդ. Աբրահամեանը, նշանակեցինք Հոգևոր Խորհրդատու (chaplain) հայոց բանակին, ինչ որ արաջինն էր իր տեսակին մէջ մեր արդի պատմութեան մէջ: Ձինք ներկայացուցինք՝ ՀՀ Պաշտպանութեան Նախարարին և բանակի պնտասխանատուներուն: Այժմ իր գրառենեակը ունի Պաշտպանութեան Նախարարութեան մէջ, ուրկէ յառաջ կը տանի իր գործը, այցելելով բանակային պորամասեր:

Տրուած ըլլալով որ Շիրակի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպս. Բունիաթեանը հրաժարեցաւ իր Առաջնորդական պաշտօնէն,

Սոաքնորդական Տեղապահ նշանակեցինք Հոգեշ. Տ. Փառէն Ծ. վրդ. Աւետիքեանը, որ Տիտորոյթէն եկած էր Մայր Աթոռ և փափաք յայտնած իր եկեղեցական ծառայութիւնները մատուցել Մայր Հայրենիքի մէջ:

Յունիսի 15-ին վեց Թեմերու Սոաքնորդներ՝ Սիւնեաց, Արագածոտնի, Գուգարաց, Կոտայքի, Ուկրաինայի, Հարաւային Ռուսաստանի վարդապետական աստիճանով թեմակալները բարձրացուցինք եպիսկոպոսական աստիճանի, եպիսկոպոսական օծման արարողութիւնը հանդիսաւորապէս կատարելով Մայր Տաճարին մէջ: Սնոնք են՝ Աքրահամ Եպս. Մկրտչեան, Նաւասարդ Եպս. Կճոյեան, Սեպուհ Եպս. Չուլճեան, Առաքել Եպս. Բարամեան, Նաթան Եպս. Յովհաննէսեան, Եզնիկ Եպս. Պետրոսեան:

Երկու օր առաջ, 14 Դեկտեմբերին, արեղայական ձեռնադրութիւն ստացան ձեռամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Սոաքնորդ՝ Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեանի, Հոգևոր ձեւարանի շրջանաւարտ սաներէն Սամուէլ, Նշան և Տիգրան սարկաւազները և վերակոչուեցան Տ. Արշակ, Տ. Խորէն և Տ. Արշէն Աբեղաներ: Երեք նոր անդամներով զօրացաւ Մայր Աթոռի Միաբանութիւնը:

Բ

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Անցնող դպրոցական տարեշրջանը (1996-1997) անցաւ խաղաղ և արդիւնալից: Ունեցանք 15 շրջանաւարտ սաներ (սարկաւազներ), որոնք այժմ կը պատրաստեն իրենց աւարտաճառերը և ստանձնած են որոշ գործեր Մայր Աթոռոյ Մայրավանքին, Բրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնին և Թեմերուն մէջ:

Գէորգեան ձեւարանի նախկին շէնքը, որ պետութեան կողմէ վերադարձուած էր Մայր Աթոռոյ Երջանկայիշատակ Վազգէն Ա. Վեհափառի օրով, հիմնովին և լաւագոյն պայմաններով վերանորոգուեցաւ բարերարութեամբը ապգային բարերար Տէր և Տիկին Գէորգ Յովնանեաններու (ԱՄՆ) և գործնական հսկողութեամբը Ամերիկահայոց Արևելեան Թեմի Օգնութեան Ֆոնտի Երևանի գրասենեակի շինարարական մասնագէտներու: Սեպտեմբերի 18-ը պատմական օր մը եղաւ, երբ վերաբացումը կատարեցինք Գէորգեան ձեւարանի վերանորոգեալ շէնքին, ի ներկայութեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին և բարերարներուն ու եկեղեցական, պետական, գիտական, ակադեմական, համալսարանական անձնաւորութիւններու և հրաւիրեալներու ընտիր բազմութեան մը: Այդ առիթով Մեր արտասանած խօսքին մէջ Հոգևոր ձեւարանը վերակոչեցինք Գէորգեան Հոգևոր Ծեմարան:

Այժմ շէնքը կը գործածուի դասաւանդութեան և դասախօսութեանց որպէս կեդրոն, ուր աւելի քան 150 ուսանողներ կրնան վայելել ուսման, վարձացման, մտաւորական պատրաստութեան աշխատանքի յարմարագոյն պայմանները: Գրասենդանային կահաւորման յատուկ բոլոր առարկաները նուիրուեցան Տուպայի հայ ապգայիններու կողմէ:

Գրադարանային կազմակերպման համար հարկ եղած առաել նպաստաւոր միջոցները կ'ապահովուին մօտ ատենէն:

Գէորգեան Հոգևոր Ժեմարանի մեր սաներուն թիւը այս տարի հասաւ 108-ի: Աւելի քան 20 դիմումնագիրներ մերժուեցան բնակմարանային կեցութեան մեր պայմաններու անբաւարարութեան պատճառով: Ուրախ ենք տեղեկագրելու, որ ուսանողական հանրակացարանի շէնքին հիմնարկէքը տեղի ունեցաւ արդէն Հոկտեմբերի 4-ին: Այժմ շինարարական աշխատանքները արագ թափով կը լառաջանան: Մեր յոյսն է մօտաւորագոյն ապագային Գէորգեան Հոգևոր Ժեմարանի շրջափակին մէջ կանգնած տեսնել այդ եռայարկ շէնքը, որուն բարերարներն են՝ ազգային բարերար Տէր և Տիկին Վահան և Անոյշ Շամկեանները՝ Ֆրեյնդշէն (ԱՄՆ):

Միւս երկու հոգևոր դպրանոցները՝ Սեանի մէջ Այրարատեան Հայրապետական Թեմի Վազգէնեան դպրանոցը և Շիրակի Թեմի Գիւմրիի դպրանոցը շարունակեցին իրենց գործը 60 և 45 աշակերտներով: Սեանի դպրանոցի առաջին 9 շրջանաւարտները իրենց ուսումը շարունակեցին և շրջանաւարտ եղան Մայր Աթոռի Հոգևոր Ժեմարանի 2 յարանէն:

Գէորգեան Հոգևոր Ժեմարանի մասին տեսնել մանրամասն տեղեկագիրը Տեսուչին՝ Հոգեջնորի Տ. Հայկապուն Ս. վրդ. Նաճարեանին:

Գ

ՏՊԱՐԱՆ

Տպարանի հրատարակչական գործը ընթացաւ արդիւնաւոր պտղաբերութեամբ: Բացի ընթացիկ հրատարակութիւններէն, ինչպէս՝ "Էջմիածին" ամսագիր, օրացոյց և աղօթքի թերթիկներ, ունեցանք կրօնական, պատմական, բանասիրական, գրական հատորներու շարան մը, որոնք պերճախօս վկայութիւն են մեր Մայր Աթոռի մշակութային առաքելութեան վարձացմանը: Ուրախութեամբ կը յայտնենք, որ անցնող ութ ամիսներու ընթացքին 31 գիրքեր և գրքոյկներ են հրատարակուած: Սոյն տեղեկագրին կցուած է այդ հրատարակութեանց ցանկը՝ պատրաստուած Տպարանի Տեսչութեան կողմէ:

Հրատարակութեանց այդ շղթային մէջ կ'ուզենք կանգ առնել Օրմանեան Պատրիարքի "ՀԱՄԱՊԱՏՈՒՄ"-ի արդի արևելահայերէնի թարգմանութեան մեծադիր հատորի տպագրութեան, որ իրագործուեցաւ մեր երիտասարդ միաբաններու աշխատանքով և Ամերիկահայ մեր բարերարներէն տիկին Հելէն Մարտիկեանի բարերարութեամբ ու Նորվելլոյ Սուրբ Գրոց Ընկերութեան աջակցութեամբ:

Օգոստոսի 20-25-ի օրերուն Մայր Աթոռի հիւր ունեցանք Չուիցերիոյ Սուրբ Գրական Ընկերութեան պատուիրակութիւն մը գլխաւորուած ընդ. քարտուղար Պրն. Տէյվիտ Ուայտմանի կողմէ: Աչքէ անցուցին Տպարանի տեքնիկ բաժինները, մեքենաները և այլևս տպարանին իրենց նուիրած

գործիքներու ամբողջական պատասխանատվութիւնը փոխանցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան:

Տպարանին կը պակսի գունաւոր բաժանման յատուկ գործիքը, որ մեծ նշանակութիւն ունի մեր հրատարակութիւններու որակի բարելաւման տեսակէտէն:

Դ

ՋՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՑԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ջրիստոնէական Դաստիարակութեան և Զարոպութեան Կեդրոնի գործունէութիւնը առաջ տարուեցաւ աշխտօժ և յարաճուն ընթացքով՝ ըստ նախորդ Մեր տեղեկագրին մէջ նշուած ուղղութիւններուն, այսինքն.

ա) Ուսուցիչներու և ուսուցչուհիներու պատրաստութիւն.

բ) Լսողա-տեսողական միջոցառումներ հեռուստատեսիի օգտագործմամբ.

գ) Հրատարակութիւններ.

դ) Դասագիրքերու և ուղեցոյցներու պատրաստութիւն:

Նախ յայտնենք, որ Կեդրոնի մնայուն պաշտօնէութեան թիւը բարձրացաւ 24-ի:

Չեռք բերուեցան հեռուստատեսիի ծրագիրներու պատրաստութեան համար հարկ եղած նոր գործիքներ և վիտէօներու բազմացման տեքնիկական միջոցներ:

Առաջին բնագաւառին մէջ, Երևանի, Արմավիրի, Մասիսի, Սպարանի և Արտաշատի դասընթացքներուն վրայ աւելցաւ Վանաձորի կեդրոնը, ինչպէս նաև Հրապփանի և Արովեանի կեդրոնները՝ Կոտայքի Թեմի մէջ:

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռի Վեհարանի մեծ դահլիճին մէջ տեղի ունեցաւ կրօն դասաւանդող ուսուցիչներու և ուսուցչուհիներու միօրեայ ճառքը մեր Եկեղեցւոյ առաջին հիմնադիրներու՝ Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս Առաքեալներու տօնին առիթով: Մայր Տաճարին մէջ մատուցուած պատարագին և ուսուցիչներու Սուրբ Հաղորդութիւն ստանալէն ետք, շուրջ 450 ուսուցիչներ և ուսուցչուհիներ համախմբուեցան Վեհարանի մեծ սրահը, ուր տրուեցան դասախօսութիւններ: Այստեղ, գեղեցկագոյն և քաջաբերական երևոյթն այն էր, որ 310 անձեր, մեծաւ մասամբ կանայք, որոնք կանոնաւոր կերպով հետևած էին երկամեայ դասընթացքներուն վերոյիշեալ կեդրոններուն մէջ և յաջողութեամբ անցուցած էին քննութիւնները, ստացան իրենց վկայականները: Հանդիսութեան անձամբ ներկայ եղաւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան և Գիտութեան Նախարար՝ պրն. Արտաշէս Պետրոսեանը, որ իր խոր գոհունակութիւնը յայտնեց կատարուած աշխատանքի մասին: Այժմ կը մնայ գնահատել այն ուսուցիչներն ու ուսուցչուհիները, անոնց համար ստեղծելով նիւթական վարձատրութեան միջոցներ, որպէսզի առաւել ևս զարգանայ կրօնական դաստիարակութեան գործը թէ՛ հանրային և թէ՛ Կիրակնօրեայ վարժարաններուն մէջ:

Երկրորդ. լսողա-տեսողական միջոցառումները նոյն երեք ծրագիրներու կանոնադր պատրաստութեամբ և հետուստատեսային ներկայացմամբ մատուցուեցան մեր ժողովուրդին, այսինքն՝ «Խորան լուսոյ», «Առաօտ լուսոյ» և «Միրեցեք զՄիմեան» խորագիրներու տակ:

Երրորդ. հրատարակութիւններու քնագաւառն ալ արձանագրեց նոր նուաճումներ: Ստորև ցանկը մի քանի հրատարակութեանց.

- Հայ Եկեղեցու հայրերի մեկնութիւնից քաղուած «Մեկնութիւն ժամակարգութեան»

- Ս. Եղիշէի «Ճառ Տիրոջ պայծառակերպութեան մասին»

- Զաքարիա Զագեցու և Մովսէս Բերթողի «Աստուածամօր վերափոխման և նրա պատկերի մասին»

- Ս. Գրիգոր Տաթևացու «Քարոյ խաչի»

- Յայսմատուրքից «Տօն մեր Սուրբ Թարգմանիչների»

- Ստեփանոս Սիւնեցու «Համառօտ մեկնութիւն չորս Աւետարանների»

- «Շարականի ընտրանի»

- «Կէտ առ կէտ» մանուկների գունապարդման հոգևոր աշխատ

- Պետրոս Բեռիբեանի «Լեզու նախնեաց» գրաքարի ինքնուսույց:

Ամբողջական պատկերը կը տեսնէք Մեր այս Վեկոյցին կցուած տեղեկագրին մէջ, որ պատրաստուած է կեդրոնի վարիչ-տնօրէն Վաչգէն վրդ. Միրզախանեանի կողմէ:

Չորրորդ, դասագիրքերու և ուղեցոյց գրքոյկի պատրաստութեան գործը արագ ընթացքի մէջ է: Վերջինս լիովին պատրաստ է և կը սպասէ Մեր ներածական խօսքին՝ տպարան յանձնուելու համար:

Կեդրոնի ղեկավարած և իրագործած այս գործունէութենէն անկախ, Մենք Մայր Աթոռի կողմէ շարունակեցինք հովանաւորել ամէն շաբաթօր «Արամ խաչատուրեան» ֆիլիալմոնիայի ընդարձակ սրահին մէջ կրօնական համերգներու մատուցումը մեր ժողովուրդին՝ երգչախումբի և նուագախումբի միջոցաւ, ղեկավարութեամբ ծանօթ Մայեւթորո Լորիս ձգնաւորեանին:

Ամենէն յատկանշական բաժիններէն մէկը քրիստոնէական դաստիարակութեան մարզին մէջ համալսարանական ուսանողութեան մէջ տարուած աշխատանքին աշխուժացումն էր այս շրջանին:

Այժմ կապմուտ է համալսարանական ուսանողութեան մէջ մեր Ս. Եկեղեցւոյ առաքելութիւնը յառաջ տանելու համար Քրիստոնէական Հայկական Մշակութային Միութիւն անունին տակ կապակերպութիւն մը, յատուկ Յանձնախումբով, նշանակուած Մեր կողմէ և ղեկավարուած Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Աստուածաբանութեան դասախօս Տ. Տաթև Արքեպս. Սարգիսեանի կողմէ:

Միութեան կեդրոնը այժմ կը գտնուի Երևանի Պետական Համալսարանի Աստղաժառանգական ֆակուլտետի բաժանմունքին մէջ և իր գործունէութիւնը յառաջ կը տանի կապակերպելով դասախօսութիւններ և Համալսարանի պնայական բաժրններէն (ՈՒՐ) և այլ անհատական նախաձեռնութեամբ կապմուած համալսարանական հաստատութիւններէ ուսանողներ արձանագրելով և ներառելով գործունէութեան մէջ:

Անցնող ամառուան ընթացքին, Սեւանի ափին, Գեղարքունեաց Թեմին մէջ, աշխատանքային ջամբար մը (Work camp) կապակերպուեցաւ երկու շաբաթներու վրայ տարածուած:

Իսկ վերջերս, Դեկտեմբերի 13-ին, ուխտագնացութիւն մը կապակերպուեցաւ, Ս. Յակոբի տօնին առթիւ, Արտաշատի Մրգաւանի շրջանի Ս. Յակոբ եկեղեցու մէջ, աւելի քան 200 ուսանողներու մասնակցութեամբ: Մենք անձամբ ներկայ գտնուեցանք և Մեզ հետ միասին տարինք Ս. Յակոբի մասունք-Աջը: Շրջանի ժողովուրդը հոծ բազմութեամբ ներկայ գտնուեցաւ: Քրիստոնէական վերաթնութեան սքանչելի առիթ մը եղաւ այս նախաձեռնութիւնը, որ ապագային բնականօրէն պիտի շարունակուի և պարգանայ:

Ե

Ս. ՄԵԱՐՈՊ ՄԱՀՏՈՑ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ

Ս. Մեարոպ Մաշտոցի շիրիմի կողքին՝ Օշականի մէջ, անցնող տարիէն արմատապէս վերակառուցուած էր հին դպրոցի շէնքը, որ այժմ կը կոչուի «Ս. Մեարոպ Մաշտոց» Դպրութեան Տուն: Գլխաւոր առաքելութիւնը պիտի ըլլայ Ս. Մեարոպ Մաշտոցի և Թարգմանիչ վարդապետներու ոսկեդարեայ մշակութային ժառանգութեան շէշտեալ ձևով ծանօթացումը բոլոր ուխտաւորներուն, այցելուններուն, յատկապէս դպրոցական աշակերտներուն, որոնք ամէն տարի տասնեակ հազարներով կ'այցելեն Օշական: Դպրութեան Տան տնօրէն նշանակուեցաւ Ալֆրետ Շահնապարեան, որ այժմ Արագածոտնի Թեմի Առաջնորդարանի գործակցութեամբ և Մայր Աթոռի հովանաւորութեան ներքոյ կը ղեկավարէ Դպրութեան Տան գործունէութիւնը: Երեք խորհրդակցութիւններ տեղի ունեցան մշակութային ծառայութեան նուիրուած մտաւորականներու հետ նոյն ինքը Դպրութեան Տան մէջ և յատուկ կոչ ուղղուեցաւ մեր ժողովուրդին, որ Ս. Մեարոպի անձին և գործին նուիրուած փաստաթղթերու, գեղարուեստական նկարներու և հրատարակութիւններու նուիրատուութիւններով ձոխացնեն գրադարանային և թանգարանային բաժինը: Կեդրոնին մէջ պարբերաբար տեղի պիտի ունենան գիտաժողովներ, ցուցահանդէսներ, հանդիպումներ՝ նուիրուած հայագիտութեանը: Շէնքի վերակառուցման բարերարը հանդիսացաւ պրն. Ջիւան Կոփոյեան (Շիկագոյէն), իսկ թանգարանային բաժնի կահաւորման և դասաւորման բարերարութիւնը ստանձնած էր «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը»:

Մեզի համար յատուկ գոհունակութիւն կը պատճառէ այս Կեդրոնի

բացումը, որովհետև ցարդ մեր ամենամեծ սուրբերէն Մեսրոպ Մաշտոցի յիշատակը կապուած էր միայն իր շիրիմին, բայց կենդանի անձնաւորութիւն է մեզ համար նաև այսօր և լինելու է ապագային: Անհրաժեշտ էր, որ իր շիրիմի կողքին վերակենդանանար նաև իր թողած անհաւասարելի ժառանգութիւնը մեր ժողովուրդի ներկայ և ապագայ կեանքին մէջ՝ նորանկախ Հայաստանում:

2

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Շինարարական գործունէութիւնը յառաջ գնաց աշխոյժ ընթացքով: Չանոնք կը ներկայացնենք շատ ընդհանուր գիծերու մէջ, և ընտրողաբար, շորս գլխակարգումներու տակ.

1. Ընթացիկ նորոգութիւններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և այլ վանքերում մէջ: Այս բաժնի ներքև կ'իյնան բազմաթիւ աշխատանքներ, որոնց մանրամասն ցուցակը Մեզի տրամադրուած է Կաթողիկոսարանիս վարչա-տնտեսական և ֆինանսական գործերի կառավարչութեան կողմէ առանձին և մանրամասն տեղեկագրով: Այս գլխակարգումի տակ կ'իյնան Մայր Աթոռի Մայրավանքի տարածքի բարեկարգումը, ծածկասպելքու նորոգում և վետեղում, Վեհարանի, Վանատան, տնտեսական շէնքի, Հոգևոր ձեմարանի շէնքի, Երևանի Վիլլայի, Տպարանի, կաթսայատան, Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի, Գայեանէ վանքի, Գեղարդավանքի և այլ վերանորոգչական աշխատանքներ.

2. Թեմերու մէջ կատարուած աշխատանքներ՝ օժանդակութեամբ Մայր Աթոռի: Աշխատանքներ կապուած՝

- Այրարատեան Թեմին Առաջնորդարանի ընդլայնման և Ս. Յովհաննէս Մկրտիչ և Ս. Չօրատր եկեղեցիներուն:

- Շիրակի Թեմի Առաջնորդարանի կահաւորման, բարերարութեամբ պրն. Գալուստ (Զարյ) Սողոյեանի, Տիթրոյթէն:

- Արագածոտնի Թեմի Առաջնորդարանի շէնքի հիմնական վերանորոգման, բարերարութեամբ Լիբանանահայ բարերար Տէր և Տիկին Ժիրայր և Յասմիկ Գաբրիէլեաններու: Բացումը կատարուեցաւ 11 Հոկտեմբերին արժանավայել շուքով:

- Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցիի շրջափակի ցանկապատման:

- Գեղարքունեաց Թեմի Գալատի եկեղեցւոյ տանիքի հիմնական վերանորոգման և այլ եկեղեցիներու մասնակի նորոգման:

- Կոտայքի Թեմի եկեղեցւոյ վանգակատան նորոգման:

- Գուգարաց Թեմի մէջ Իջևանի Ս. Ներսէս եկեղեցւոյ կառուցման, բարերարութեամբ Տէր և Տիկին Ն. Ներսէսեաններու, Գանատայէն, և օժանդակութեամբ Մայր Աթոռի:

- Սիւնեաց Թեմի մէջ Գորիսի եկեղեցւոյ վերանորոգման և Կապանի նոր եկեղեցւոյ կառուցման:

- Արցախի մէջ Մարտակերտի եկեղեցւոյ շինութեան և Շուշիի եկեղեցւոյ նորոգման:

- Վրաստանի Թեմի մէջ Զափաքի շրջանի եկեղեցիներու նորոգութեան:

3. Պատմական եկեղեցիներու նորոգութեան համար նախապէս սկսուած աշխատանքներու շարունակում:

- Գառնահովիտի Ս. Գէորգ եկեղեցւոյ վերանորոգութեան աւարտում, օժանդակութեամբ Լոնտոնի Ս. Սարգիս Հիմնադրամի:

- Արենիի մէջ Մոմիկ վարդապետի կառուցած եկեղեցւոյ նորոգութեան աւարտում: Օծումը տեղի ունեցաւ Մեր ձեռամբ՝ Սեպտեմբերի 28-ին:

- Տաթևի վանքի եկեղեցւոյ վերանորոգման շարունակում, բարերարութեամբ Լոնտոնաքնակ Քիրքճեան եղբայրներու:

4. Հիմնական այլ աշխատանքներ.

ա) Գէորգեան Հոգևոր Ժեմարանի հին շէնքի արմատական վերանորոգում.

բ) Գէորգեան Հոգևոր Ժեմարանի հանրակացարանի նոր շէնքի կառուցում:

Այս երկուքի մասին մանրամասն տեսնել սոյն տեղեկագրի մէջ Գէորգեան Հոգևոր Ժեմարանին նուիրուած բաժնին և Տեսուչ Հայր Հայկապուն Ծ. Վրդ.-ի տեղեկագրին մէջ:

գ) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընդարձակեալ հողամասի քարով ու երկաթով շրջափակման մեծ աշխատանք, որուն առաջին բաժինը աւարտած է: Կը մնայ փոքր բաժին մը միայն:

Է

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Շինարարական աշխատանքներու այս բաժնին կը միացնենք 1700-ամեակի առիթով ծրագրուած և այժմ կառուցման ընթացքի մէջ եղող Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ կառուցման մասին ցարդ կատարուած աշխատանքի համար հետեւեալ ամփոփ ղեկոյցը. —

Ապրիլի 7-ին, Թեմակալ Առաջնորդներու և Թեմական Ազգային Եկեղեցական իշխանութեան աշխարհական ներկայացուցիչներու համաժողովի աւարտին, տեղի ունեցաւ առաջին չորս հիմնաքարերու (Մայր խորանի) օրհնութիւնն ու օծումը: Հողային պեղման աշխատանքներու, միւս տասներկու հիմնաքարերու տեղերու պատրաստութեան գործը շարունակուեցաւ և Յուլիսի վերջին, ի ներկայութեան Մայր Եկեղեցւոյ գլխաւորագոյն բարերար Ալեք Մանուկեան ընտանիքի ներկայացուցիչ և ՀԱԸՄ-ի Նախագահուհի Տիկին Լուիկ Սիմոն-Մանուկեանի:

Գործերը տենդագին թափով սկիզբ առին և, սակայն, վերջերս որոշ

դանդաղեցում մը արձանագրեցին թեքնիկական պատճառներով: Մեր ջանքը պիտի ըլլայ որ վերատին ուժեղացուի և արագանայ ընթացքը, որպէսզի 2001 թուին այս մեծ գործը հասնի իր աւարտին և տեղի ունենայ օծումը փառաւորագոյն շուքով:

Այս կապակցութեամբ ուրախ ենք յայտնելու, որ Ալեք Մանուկեան ընտանիքի բարերարութեան կողքին եղան երկու նոր բարերարութիւններ երկու մատուոններու կառուցման համար՝ Մայր Տաճարի մուտքի բաժնին վրայ Ս. Տրդատ և Ս. Աշխէն անուններով կոչելի: Այդ երկու մատուոններուն բարերարները պիտի ըլլան Տէր և Տիկին Պոպ Գէորգեան (Պանքոքէն) և ազգային բարերար Տէր և Տիկին Նապար Նապարեան՝ Միացեալ Նահանգներէն:



Շինարարական այս աշխատանքները գրաւեցին Մեր գործունէութեան ամենէն կարևոր բաժիններէն մէկը: Մնչտաւագելի են այս աշխատանքները և յառաջիկայ 3-4 տարիներու ընթացքին աւելի ուժգին թափ պէտք է ստանան, որպէսզի 1700-ամեակին մենք մեր ժողովուրդին և աշխարհին ներկայանանք առաւել պայծառ պատկերով և որպէս կենդանի, գործօն և ստեղծագործ եկեղեցի:



Շինարարական աշխատանքներու այս ծիրին մէջ Մենք պարտք կը զգանք նաև յիշատակելու մեր Ամերիկահայ երեք թեմերու կարևոր ներդրումները. —

- Սեպտեմբերի 19-ին Գիւմրիի մէջ Մեր նախագահութեամբ բացումը կատարուեցաւ Ամերիկահայոց Արևելեան Թեմի՝ կողմէ կառուցուած և վազգէն Ա Կաթողիկոսի անուամբ կնքուած մեծ դպրոցին, ներկայութեամբ Սոաքնորդ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանի և թեմական ժողովական անձերու:

- Սեպտեմբերի 20-ին Ստեփանավանի մէջ, դարձեալ Մեր նախագահութեամբ, կատարուեցաւ հանդիսաւոր բացումը ընդարձակ դպրոցական շէնքին, իր մատուոնով և մարզային բաժիններով, կառուցուած Ամերիկահայոց Արևմտեան Թեմին, և մասնակցութեամբ Թեմակալ Սոաքնորդին՝ Գերշ. Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանին և Թեմական աշխարհական ներկայացուցիչներու:

- Գանատայի Հայոց Թեմի նախաձեռնութեամբ և հետևողական աշխատանքով կատարուեցաւ Իջևանի Ս. Ներսէս Շնորհալի եկեղեցւոյ կառուցումը, բարերարութեամբ իրենց Թեմի հաւատացեալներէն՝ Տէր և Տիկին Ն. Ներսէսեաններու: Աշխատանքը լրիւ աւարտած է: Մօտ ատենէն կը կատարուի օծումը, ինչպէս յիշատակեցինք արդէն:

Ը

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Անցնող ամիսներու ընթացքին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նոր թափ տուաւ ժողովուրդի ծառայութեան, մարդասիրական, բարեգործական և փոքր չափի ու ժողովուրդի պարզ խաւերու համար գործեր ստեղծելու մարզին մէջ: Յիշատակութեան արժանի կը գտնենք հետևեալ գործունէութիւնները:

ա) Օժանդակութիւն փոքր աստիճանի կարիքաւոր անձերու, ինչպէս որբերու, հիւանդներու, հիւանդանոցային ծախսերու, ընտանեկան յարկերու տակ ապրող ծերերու, հաշմանդամներու:

բ) Կամոյի մանկատան սննդեղէնի հայթաթում:

գ) Վաղարշապատ քաղաքի հիւանդանոցի, մանկական յարկաբաժնի նորոգութիւն և անմիջական կարիքներու հոգացում:

Վերև յիշուած երեք տեսակի աշխատանքներուն մէջ նիւթական օժանդակութեան աղբիւրը եղաւ Ամերիկայի մեր բարեսիրտ ազգայիններէն Տէր և Տիկին Հարըլտ և Ճոզեֆին Կիլամէրեաններու հաստատած ֆոնտը՝ ի նպաստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:



Ընկերային ծառայութեան այնքան կարևոր մարզին մէջ Մենք վերջին ամիսներուն նոր թափ տուինք և մեծ աշխատանք ի գործ դրինք կարիքաւոր անձերու և ընտանիքներու փոքր չափի գործեր ստեղծելու համար փոխատուութիւններ կատարելու խիստ կարևոր և մեծապէս օգտակար ու Մէջ համար առաջնային կարևորութիւն ունեցող գործին:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Հայաստանին նուիրուած «Կոր Մեղան»-ի կողմէ մշակուած ծրագրի համաձայն, յատուկ գրասենեակ հաստատուեցաւ Մայր Աթոռի մէջ 1997-ի Մարտին՝ օժանդակութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին: Որպէս պատասխանատու ղեկավար վարիչ այդ գործին նշանակուեցաւ պրն. Կարէն Նապարեանը: Ուրոյն կազմակերպութիւն է սա, իր պանքային առանձին հաշիւով և գրասենեակային դիրութիւններով:

Գրասենեակի նպատակն է Հայաստանի եկեղեցիներու և ոչ-պետական կազմակերպութիւններու հետ միասին մշակել և նուիրատու կազմակերպութեանց (donor agencies) ու անհատներու ներկայացնել քրիստոնէական կրթութեան, եկեղեցիներու շինարարութեան վերաբերեալ տարբեր-տարբեր լաւ ուսումնասիրուած ծրագիրներ:

Գրասենեակի գործունէութեան ամենէն գլխաւոր բաժիններէն մէկն է, սակայն, Հայաստանի մէջ փոքր չափի գործերու վարգազման առաքելութիւնը: Գրասենեակը ստեղծելու վրայ է հիմնադրամ մը, հայ և օտար աղբիւրներէ, որմէ վարկեր պիտի տրամադրուին անհատներու և ընտանիքներու, 500 տոլարէն մինչև 3000 տոլարի սահմաններուն մէջ, որպէսզի անոնք սեփական գործ սկսին և յառաջ տանին, իրենց ապրուստը իրենց աշխատանքով շահելու և ուրիշներէն կախում

շունենալու համար: Յարդ միջազգային էկիմենական կազմակերպություններու և մեր քանքերով, անհատ հայ ազգայիններու կողմէ տրամադրուած փոքր գումարներով, կարելի եղաւ 29.200 տոլար տրամադրել շուրջ 25 անհատներու և ընտանիքներու: Փոխ տրուած գումարները տիրուի վերադարձունին մէկ կամ երկու տարիէն, ըստ համաձայնագրի, որ կը կնքուի գրասենեակի վարիչին և վարկը ստացողին միջև:

Բացի այս ուղղակի փոխատուութեան ձևէն, Ընկերային Ծառայութեան և Զարգացման Գրասենեակը ապահովեց որոշ գումարներ միջեկեղեցական և ոչ-կառավարական աղբիւրներէ, որոնք յատկացուեցան աղքատ անպատկաններու և, որոշ պարագաներու ՇԵՆ կազմակերպութեան միջոցաւ՝ իրագործելի վարգացողական ծրագիրներու, նախապէս վաւերացուած «կլոր Սէղան»ի Գործադիր Մարմնի կողմէ: Յարդ աւելի քան 200.000 տոլարի հասնող գումարներով նման աշխատանքներու տրամադրուած են նպաստներ միջեկեղեցական աղբիւրներէ գոյացած:

Կարծէ այս տեսակէտէն յատուկ ուշադրութիւն ընծայել նման գործելակերպի: Ամերիկահայ ազգայիններէն պրն. Բիւլանդ Մարգարեան խանդավառ նուիրումով լծուած է այս գործի միջոցներու հաթաթման, ինք ևս անձամբ իր սեփական օգնութեան բաժինը բերելով:



ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ութ ամիսներու ընթացքին մեր ժողովուրդին հետ կենդանի կապ տեսողներու տեսակէտէն, քացի Հայաստանի Թեմերուն Մեր տուած յաճախակի այցելութիւններէն, ունեցանք հետեւեալ հովուապետական այցելութիւնները, Հայաստանէն դուրս գտնուող մեր Թեմերու. —

ա) ԱՒՍՏՐԻՈՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Յունիս 26-2 Յուլիս շրջանին եղանք Վիեննա, հրաւերովը Սոաշնորդ Տ. Մեսրոպ Արքեպս. Գրիգորեանի և Մեր առաջին Հայրապետական այցելութիւնը ընծայեցինք Աւստրիոյ մեր Թեմի ժողովուրդին:

Ս. Հռիփսիմէ Եկեղեցիին մէջ, ապա «Շիրապ» դպրոցին մէջ, պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին, առիթներ ունեցանք խօսելու և հաղորդ պահելու մեր Թեմի պատասխանատուները և համայնքի պատկանները Մայր Աթոռ Ա. Էջմիածնի գործունէութեան և առհասարակ Հայաստանի ու Էջմիածնի այսօրուան կացութեան, կարիքներուն և իրագործումներուն մասին:

Մեր այցելութիւնը ստացաւ նաև էկիմենական նկարագիր և տարողութիւն, էրբ բազում առիթներ ներկայացան հանդիպումներ ունենալու Վիեննայի նախկին Կարտինալ Բէտիկի, այժմու Արքեպս. Շէօնպորնի, PRO ORIENTE կազմակերպութեան ղեկավարութեան և այլ կաթողիկ վանական և աստուածաբանական, ակադեմական շրջանակներու հետ: Հրաիրուեցանք քարոզելու Ս. Ստեփանոս հռչակաւոր Բաթէտրապի մէջ, ուր տեղի ունեցաւ հինգ նոր հոգևորականներու ձեռնադրութիւնը Գերշ. Տ. Շէօնպորն Արքեպիսկոպոսի կողմէ:

Տեղի ունեցաւ նաև պետական և դիւանագիտական շրջանակներու հետ ճաշկերոյթ-հանդիպում, Սուտրիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան տեղակալի և դեսպաններու մասնակցութեամբ:

Այցելեցինք նաև Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը և Վիեննայի Միփթարեան Հայրերու վանքը, ինչպէս նաև Միմիմոնտոս անունով ծանօթ պօսաշրջիկութեան քաղաքը, ուր այլ ազգերու կարևորագոյն պետական և կրօնական կոթողական շէնքերու շարքին կար Ս. Էքմիաժնի Մայր Տաճարը փոքր չափերով՝ շինուած Հայաստանեան տուֆ քարէ, ըլլալով ճշգրիտ վերարտադրութիւնը մեր Մայր Տաճարին:

բ) ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԻՆ

Մեզի համար իսկական յայտնութիւն մը եղաւ Հարաւային Ռուսաստանի հայութիւնը: Մեր առաքին հովուապետական այցելութիւնն էր Հարաւային Ռուսաստանի Թեմին (29 Օգոստոս - 5 Սեպտեմբեր), Սոաքնորդ Գերշ. Տ. Եպիսկ Եպս. Պետրոսեանի հրաւերով: Եղանք Քիսլովոդսկ, Փիթիգորսկ, Արմավիր, Կուրգանսկ և Կրասնոտար քաղաքները: Հոգեկան աննախընթաց բաւարարութիւն պագինք օժելով երեք նորակառոյց եկեղեցիներ Քիսլովոդսկի (Ս. Վարդան), Գուրգանինսկի (Ս. Նիկողայոս) և Քրասնոդարի մէջ (Ս. Թովհանէս Աւետարանի): Երկրորդը և երրորդը կառուցուած էին անհատ բարերարներու կողմէ, իսկ առաջինը՝ ժողովուրդի մասնակցութեամբ:

Առիթներ ունեցանք բազում անգամներ ըլլալու ժողովուրդին և թեմական իշխանութեանց հետ, տեղեկանալու ժողովուրդի կարիքներուն և հրճուելու հայութեան ու Հայց. Սոաքեական Եկեղեցիին հանդէպ նոր արթնութեան և ուժեղ կապուածութեան երևոյթը հաստատելով:

Մեր այցելութեան ընթացքին բոլոր քաղաքներու մէջ անխտիր առիթներ ունեցանք տեղւոյն Ռուս Օրթոտոքս Եկեղեցիներու Սոաքնորդներուն հետ հանդիպելու: Բոլորն ալ բացառիկ յարգանք և սէր ցոյց տուին հանդէպ Հայ Եկեղեցւոյ: Նոյնիսկ Մենք անձամբ, Սոաքնորդ Եպիսկ Սրբապանի և Մեր պատուիրակութեան անդամներուն հետ միասին (Գրիգորիս Արքեպս. Բունիաթեան, Սեպուհ Եպս. Չուլճեան և Արտակ Արդ. Տիգրանեան), այցելեցինք երկու Ռուս Օրթոտոքս Եկեղեցիներ:

Սմէն տեղ, անխտիր պետական իշխանութիւնները, թէ՛ նահանգային և թէ՛ քաղաքային մակարդակներու վրայ, ցոյց տուին ջերմ և բարեացակամ համակրանք հանդէպ հայ ժողովուրդին, Մայր Աթոռ Ս. Էքմիաժնի և Հայաստանի Հանրապետութեան:

գ) ԱՆԳԼԻՈՅ ԹԵՄԻՆ

Մեր երրորդ պաշտօնական-հովուապետական այցելութիւնը եղաւ Նիյեմբեր 10-16-ի շրջանին Անգլիոյ Թեմին տրուածը, որ հետնեցաւ Քէնթըրպորիի Արքեպիսկոպոսին Մեր տուած այցելութեան (8-10 Նոյեմբեր):

Հրաւերովը Թեմակալ Սոաքնորդ՝ Գերշ. Տ. Եղիշէ Արքեպս. Կիպրեանին, գտնուեցանք Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցի, երկիցս եղանք Ս. Պետրոս եկեղեցին և մէկ օրով այցելեցինք Մանչեսթըրի Ս. Երրորդութիւն եկեղեցին՝ և Հիւսիսային Անգլիոյ մեր գաղութը: Երեք տեղերու մէջ ալ

լայն հնարաւորութիւններ ունեցանք ժողովուրդին հետ ըլլալու և գաղութի կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հանդիպելու: Ս. Պետրոս ընդարձակ եկեղեցիին մէջ, բազմահարկի ունկնդիրներու ներկայութեան, տուինք դասախօսութիւն «Ո՞ր էի՞ք, ո՞ր եմք...» խորագիրին տակ, վերլուծելով մեր Եկեղեցւոյ, ազգի և հայրենիքի ներկայ դրուածքն ու կացութիւնը և կոչ ընելով ժողովուրդին միասնական ջանքերով զօրավիգ կանգնելու Մայր Հայրենիքին և Մայր Աթոռին: Մեր խօսքն ուղղեցինք ժողովուրդին նաև Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ մատուցած պատարագին, 18 Նոյեմբերին: Նոյնպէս Լոնտոնի և Մանչեսթրի մէջ տրուած ճաշկերոյթներուն աղիթներ ունեցանք ժողովուրդին հետ բաժնելու մեր մտածումները և կատարելու հայրական յորդորներ և թելադրութիւններ:

Առիթը ունեցանք այցելելու երկու վարժարաններ՝ Շաբաթօրեայ և Կիրակնօրեայ, որոնք միասնաբար ձեռնարկ մը կազմակերպեցին բազմահարկի ծնողներու և հանդիսականներու ներկայութեան:

Առանձին հանդիպում մը ունեցանք Լոնտոնահայ համայնքային եկեղեցական խորհուրդի նորընտիր կազմի անդամներուն հետ, որոնք մանրամասն չեկոյց տուին իրենց ազգային-եկեղեցական կեանքի և գործունէութեան մասին:



Մայր Աթոռէն Միաբաններ այցելեցին ալլապան երկիրներ՝ Գերմանիա, Միացեալ Նահանգներ, Գանատա և Կենդանի կապեր մշակեցին արտասահմանեան մեր Թեմերու եկեղեցական իշխանութեան և ժողովուրդին հետ: Առանձնապէս յիշատակելի կը նկատենք.

ա) Դիւանապետ Գերշ. Տ. Ներսէս Արքեպս. Պոպապալեանի երեք շաբաթներու այցելութիւնը Իրաքի Հայոց Թեմին, որ երկար տարիներէ ի վեր զրկուած էր նման այցելութիւններէ:

բ) Գարեգին Արքեպս. Ներսէսեանի այցելութիւնը ի Միացեալ Նահանգներ՝ մասնակցելու համար ՀԲԸՄ-ի Կեդրոնական Մարմնի ժողովին՝ որպէս անդամ:

գ) Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի վարիչ Վազգէն Վրդ. Միրզախանեանի այցելութիւնը Հարաւային Ֆրանսա, ի Մարսէյ, հրաւերովը Տ. Տարօն Եպս. Ճերէճեանի և չեկուցական ելոյթները Հայաստանի մէջ Եկեղեցւոյ կեանքի և քրիստոնէական հաւատքի զօրացման մասին:



ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒ ՀԵՏ

1997-ի Ապրիլէն ասդին մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու հետ Մայր Աթոռոյս յարաբերութիւնները շարունակուեցան բնականոն ընթացքով:

4. Պոլսոյ Հայոց Պատրիարքը՝ Տ. Գարեգին Արքեպս. Գապանճեան, երկիցս այցելեց Մայր Աթոռ՝ վերջինը անձնական հանգամանքով և առողջական պատճառով: Երբ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքը՝ Բարթողիմէոս Ա-ն իր առաջին այցելութիւնը տուաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, անցնող Մայիսին, իր պատուիրակութեան ընկերացաւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութենէն Կրօնական Ժողովի Ատենապետ Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեանը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ, ամառուան շրջանին, այցելու միաբաններ ունեցանք ինչպէս լուսարարապետ Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեան և արեղայ հայրեր, որոնք զբաղեցան թեկնածու միաբաններ և Ժառանգաւորաց վարժարանի աշակերտներ գտնելու և ընտրելու գործով: Ամէն տեսակի օժանդակութիւն ընծայեցին: Ուրախ ենք որ շուրջ 12 ուսանողներ Գէորգեան Հոգևոր Ճեմարանի անունով ընտրուեցան և մեկնեցան Երուսաղէմ: Ունեցանք նաև այցելութիւնը Տ. Վահան Եպս. Թովալեանի (Ամմանի Հայոց Սուրբնորդ), Տ. Սևան Եպս. Ղարիպեանի, Երուսաղէմէն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ անցնող ժողովին Մեր ծանուցած պաշտօնական խօսակցութիւնը տեղի ունեցաւ Օգոստոսի 8-9-ի միջոցին: Մայր Աթոռի ներկայացուցիչներն էին՝ Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանը, Տ. Գարեգին Արքեպս. Ներսէսեանը, պրն. պրն. Ռաֆայել Պապայեանը և Գրիգոր Խանճեանը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները՝ Տ. Չարեհ Արքեպս. Այնաւորեանը, Տ. Օշական Եպս. Չոլոյեանը, պրն. պրն. Խաչիկ Պապիկեանն ու Երուսաղ Փամպուկեանը:

Երկօրեայ խօսակցութեանց աւարտին միասնական յայտարարութիւն մը խմբագրուեցաւ հորհրդակցական Ժողովի դիւանին անունով, որ ըստ էութեան չէր անդրադառնար խօսակցութեանց բովանդակութեան և արդիւնքին, այլ կը թելադրէր, որ եղբայրական ոգիով խոսակցութիւնները շարունակուին յառաջիկային: Այս մասին աւելի լայն տարողութեամբ կը զեկուցեն Մայր Աթոռի ներկայացուցիչները:

Կիլիկեան Աթոռի հետ յարաբերութեան տեսակէտէն՝ անցնող Օգոստոսին Արցախի Թեմին մէջ ընկալուեցաւ Կիլիկեան Աթոռի Կիրակնօրեայ վարժարաններու տարեկան համագումարը, որուն մասնակցեցան կարգ մը ուսուցիչներ և ուսուցչուհիներ նաև Հայաստանի մեր թեմերէն:

Այստեղ ընդունեցանք նաև Լիբանանի և Հալէպի թեմերու Սուրբնորդ Թեմակալները, Հոգեշնորհ Տ. Գեղամ Ծ. վրդ. Խաչերեան և Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Գաթարոյեան, որոնք եկան «ԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամին կողմէ, իրենց թեմերու բերած նիւթական աջակցութեամբ կառուցուած բնակարանային շէնքերու բացումին ներկայ գտնուելու Գիւմրիի աղետեալ գօտիի շրջանին մէջ:

ԺԱ

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆՆԵՐ

Մնցնող Ապրիլ ամսէն ասդին միջ-եկեղեցական յարաբերութիւններու մէջ նշանակալից դէպքերն ու երևոյթները միայն կ'արձանագրենք այստեղ. —

1. Միջ-եկեղեցական յարաբերութեանց վարձացման տեսակէտով կարևոր ներդրում մը եղաւ, իր տեսակին մէջ առաջինը, այն պարագան, որ այս տարի Աւագ Ուրբաթ օրուան համար Հռոմի Կաթոլիկ Եկեղեցւոյ պետի՝ Յովհաննէս-Պօղոս A Պապի փափաքով Մենք գրեցինք այն 14 խոկումները և աղօթքները (meditations & prayers), որոնք ինքը խտայեղէն թարգմանութեամբ կարդաց «Խաչի Ճանապարհի» 14 հանգրուաններուն՝ Հռոմի Կոլիւէի շուրջ եղած թափօրի ընթացքին, որուն ներկա եղան ամէլի քան 60.000 հաւատացեալներ: Ամբողջ արարողութիւնը և աղօթքները դիտուեցան և ունկնդրուեցան բազմամիլիոն անձերու կողմէ Eurovision-ի միջոցաւ Եւրոպայի ողջ տարածքին, յատկապէս Լատին Ամերիկայի և այլ երկիրներու հեռուստատեսութեանց ժառանգութիւններով:

Այդ առիթով Մայր Աթոռէն Դիւանապետ Գերշ. Տ. Ներսէս Արքեպս. Պոպապալեանը ներկայ եղաւ արարողութեան և Պապի կողքին մասնակցեցաւ ամբողջ թափօրին:

2. Ապրիլի 10-ին Մոսկուայում տեղի ունեցաւ ԱՊՀ երկիրներու Քրիստոնէական միջյարանուանական համաժողովի նախապատրաստման առաջին խորհրդակցական ժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Նաթան Եպիսկոպոս Յովհաննէսեանը:

3. Ապրիլի 15-ին ընդունեցանք Ֆրանսայի Բարեկարգեալ Եկեղեցւոյ և Ֆրանսայի Միջ-եկեղեցական կապակերպութեան երկար տարիներու դեկավար և վարիչ՝ Վեր. Ժազ Սթիւարթը, պատուիրակութեան մը հետ միասին: Հետագային անոնք ուղարկեցին երկրորդ պատուիրակութիւն մը, յատկապէս մայրապետ քոր Էվելինը, որ հանդիպումներ ունեցաւ Կիրակնօրեայ Վարժարաններու ուսուցիչներու և ուսուցչուհիներու խումբի մը հետ, խորհրդակցելով այն կարելիութեանց մասին, որոնցմով իրենց կանանց Միաբնակութիւնները կրնան սատար հանդիսանալ Հայ Եկեղեցիին գործնականապէս, կուսանաց միաբանութեան մը կազմաւորման պարագային:

4. Մայիսի 27-30-ի ժամանակամիջոցին նոր քայլ մը առնուեցաւ Հայ և Վրացական Եկեղեցիներու յարաբերութեանց ընթացքին մէջ, Վրաց Օրթոտոքս Եկեղեցւոյ պետին՝ Իլիա A Կաթողիկոսի պաշտօնական այցելութեամբ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Չորս օրերու վրայ տարածուած այս այցելութեան ընթացքին խօսակցութիւններ ունեցանք թէ՛ եկեղեցական շրջանակներու՝ Մայր Աթոռի եպիսկոպոսական դասով և Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներու մասնակցութեամբ, և թէ՛ պետական մակարդակի վրայ տեղի ունեցած հանդիպումներով:

5. Յունիսի 19-ին Հռոմի մէջ գումարուած Կաթոլիկ Եկեղեցւոյ միջ-օգնութեան կազմակերպութիւններու ժողովին, հրաւերովը Կարդինալ

Միլվեստրինի, Մայր Աթոռը մասնակցեցաւ, որպէս ներկայացուցիչ ուղարկելով Գեորգեան Հոգևոր Ճեմարանի աստուածաբանութեան դասախօս՝ Գերշ. Տ. Տաթև Արքեպս. Սարգիսեանը, որ ներկայացուց չորս-հինգ ծրագիրներ մեր Ս. Աթոռի կրթական-դաստիարակչական և ընկերային ծառայութեանց մարպետուն մէջ, որոնցմէ ոմանց համար օժանդակութիւն ընծայեցին խորհրդակցական ժողովին մասնակցող կարգ մը կապմակերպութիւններ: Գործակցութեան դրական քայլ մը եղաւ այս մէկը՝ Կաթողիկ և Հայ Եկեղեցիներու միջև:

6. Յունիսի 23-ին Մենք անձամբ գլխաւորեցինք այն պատուիրակութիւնը, բաղկացած 6 անձերէ՝ Գերշ. Տ. Ոսկան Արքեպս. Գալփական, Մեսրոպ Արքեպս. Գրիգորեան, Նաթան Եպս. Յովհաննէսեան, Հայր Միքայէլ Ծ. վրդ. Աջապահեան, Օր. Մնահիտ Սիմոնեան (Հայաստանէն) և Տիկին Պէպթրիս Իփեքճեան (Պելճիկայէն), որոնք մասնակցեցան Երոպայի բոլոր Եկեղեցիներու (Կաթողիկ, Օրթոտոքս, Բողոքական) մասնակցութեամբ գումարուած էկիւմենական երկրորդ Համագումարին (որ 8 տարին մէկ անգամ կը գումարուի հապարաւոր ներկայացուցիչներու մասնակցութեամբ): Մեզմէ խնդրուած էր տալու բացման գլխաւոր դասախօսութիւնը, զոր մատուցինք բացման հանդիսաւոր նիստին Կրաց քաղաքին մէջ (Աւստրիա) և որ լայն արձագանգ գտաւ թէ՛ համագումարին մասնակցողներուն, թէ՛ Երոպայի մամուլին և թէ՛ Եկեղեցիներու լայն շրջանակներուն մէջ: Մեր պատուիրակութեան անդամներն ալ գործօն մասնակցութիւն բերին Համագումարի յանձնախմբային աշխատանքներուն:

Յունիս 30-էն Յուլիս 4-ի միջոցին տեղի ունեցաւ Երոպայի Եկեղեցիներու Խորհուրդի (KEK) պարբերական Համաժողովը նոյն քաղաքին մէջ, որուն մասնակցեցան մեր պատուիրակութեան անդամներէն առաջին հինգ անձերը: Որպէս անդամ Երոպայի Եկեղեցիներու Խորհուրդին՝ Սմենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչներէն Ոսկան Արքեպս. ընտրուեցաւ անդամ Կեդրոնական Յանձնաժողովին: Հետագային, Նոյեմբերին ան գործօն մասնակցութիւն բերաւ ԵՆՀ-ի ժողովներուն թէ՛ Լուքսենպուրկի և թէ՛ Ժընևի մէջ:

7. Յուլիսի 1-4 Մենք անձամբ գտնուեցանք Մոսկուա, Քրեմլինի մէջ կապմակերպուած «Հայ Եկեղեցւոյ Պաճճը» անունով բնութագրուած ցուցահանդէսին հանդիսաւոր բացման համար, զոր կատարեցինք միասնաբար Ռուս Օրթոտոքս Եկեղեցւոյ պետին՝ Ալեքսի Բ Պատրիարքին հետ, մասնակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան և Ռուսաստանի Դաշնութեան Մշակոյթի նախարարներուն: Աքանջելի արիթ մը եղաւ այս մէկը առաւել ևս սերտացնելու մեր Եկեղեցւոյ յարաբերութիւնը Ռուս Օրթոտոքս Եկեղեցւոյ հետ:

8. Յուլիսի 21-24-ի շրջանին պատմական նշանակութիւն ունեցող այցելութիւնը ունեցանք ի Մայր Աթոռ յԷջմիածին և ի Հայաստան, յանձին Կ. Պոպոյ Յոյն Օրթոտոքս Տիեզերական Պատրիարքին՝ Բարթողիմէոս Ա-ի և անոր ընկերացող պատուիրակութեան: Պատմութեան մէջ առաջին անգամն էր, որ Տիեզերական Պատրիարք մը կ'այցելեր Էջմիածին և Հայաստան: Թէ՛ Երևանի և թէ՛ Գիւմրիի մէջ եղան հանդիպումներ ժողովրդին հետ: Մեր եպիսկոպոսական դասուն և

Գերագույն խորհուրդի անդամներուն հետ երկար խորհրդակցական նիստ մը ունեցանք Քաղկեդոնական և ոչ-Քաղկեդոնական եկեղեցիներու ընտանիքներու միջև անցնող երեսուն տարիներու ընթացքին տեղի ունեցած աստուածաբանական խօսակցութեանց և անոնց ընդհանուր եկրակացութեանց մասին: Տիեզերական Պատրիարքը առիթ ունեցաւ նաև խօսակցութիւններ ունենալու Հայաստանի կացութեան մասին Հայաստանի Հանրապետութեան նախագահին և այլ բարձրաստիճան պետական անձնաւորութեանց հետ:

Տիեզերական Պատրիարքութեան կողմէ Հայքի մէջ (Կ. Պոլիս) կազմակերպուած կենսաոլորտային կամ բնապահպանութեան (environmental) հարցերուն նուիրուած Գիտական Համաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր մասնակցութիւնը բերաւ յանձին Հոգեշնորհ Տ. Հայկապոն Ծ. վրդ. Նաճարեանի:

Իսկ Սեպտեմբերի 20-28-ին, Բարթողիմէոս Ա Տիեզերական Պատրիարքին գլխաւորած համաժողովին, որ նուիրուած էր Սև Ծովեան ջրջանի բնապահպանութեան հարցերուն, և որ տեղի ունեցաւ նաւու վրայ Կ. Պոլիս-Տրապիզոն-Բաթումի-Օդեսա-Վառնա-Թեսալոնիկէ-Պոլիս նաւարկային գծով, յանուն Մայր Աթոռին մասնակցեցաւ Գերաշնորհ Տ. Նաթան Եպս. Յովհաննէսեանը:

9. Սեպտեմբերի 5-ից 12-ը Սերբ Ուղղափառ եկեղեցիէն Պախով եպիսկոպոսի հրաւերով Միքայէլ Ծ. վրդ. Աջապահեանը եղաւ Սերբիայում: Իր կեցութեան օրերին Հայր Սուրբն այցելեց բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, հանդիպումներ ունեցաւ սերբ հոգևորականութեան զանազան ներկայացուցիչներու հետ և հարցապրոյց տուեց տեղի եկեղեցական ամսագրին:

10. Սեպտեմբերի 11-19-ի միջոցին Ժրնևի մէջ գումարուած ԵՀԽ-ի Կեդրոնական Յանձնախումբի հերթական ժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը բերաւ իր երկու ներկայացուցիչներով՝ յանձինս Գերշ. Տ. Ներսէս Արքեպս. Պոպապալեանի և Օր. Սիլվա Ղապելեանի:

11. Սեպտեմբերի 24-27-ի միջոցին Ս. Էջմիածնի մէջ գումարուեցաւ միջ-եկեղեցական «Կլոր Սեղան»ի Կեդրոնական Մարմնին ժողովը, որուն ընթացքին 5-6 ծրագիրներ մշակուեցան և խմբագրուեցան: Ժնևի մէջ ԵՀԽ-ի գրասենեակին կողմէ անոնք փոխանցուեցան նուիրատու միջ-եկեղեցական կազմակերպութեանց, նիւթական աջակցութիւն ձեռք բերելու նպատակով:

12. Հոկտեմբերի 7-9-ի միջոցին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր մասնակցութիւնը բերաւ Իտալիոյ Պադովա և Վենետիկ քաղաքներուն մէջ գումարուած համա-կրօնական տարեկան հաւաքին, որ ամէն տարի կը կազմակերպուի Հռոմի Սան Իճիտիօ Միաբանութեան կողմէ, աշխարհի մէջ ապրող և գործող բոլոր կրօններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը բերաւ յանձինս Գերշ. Տ. Գիւտ Արքեպս. Նազգաշեանի և Հոգշ. Տ. Միքայէլ Ծ. վրդ. Աջապահեանի:

13. Հոկտեմբերի 22-26-ին Նորվեկիոյ Սուրբ Գրական Ընկերութենէն

երեք անձերէ պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Վեր. Սմեւոյի. այցելեց Մայր Աթոռ: Անոնց միացան Սբ. Գրոց Ընկերութեան Կեդրոնական Մարմինէն Վեր. Մանուէլ Ճինպաշեանը (Սթրասպուրկ) և Պրն. Տովինիկ (Յրանսա):

Իրենց ներկայութեան կիրակի օրը՝ Հոկտեմբերի 26-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ մատուցուած պատարագի ընթացքին Մեր արտասանած քարոսին մէջ այդ կիրակի օրը Սուրբ Գրոց օր յայտարարեցինք և Մեր շնորհակալութիւնները յայտնեցինք Սբ. Գրոց Ընկերութեան սերտ գործակցութեանը համար մեր Սուրբ Եկեղեցիին և Մայր Աթոռին հետ Աստուածաշունչը մեր ժողովուրդին մէջ տարածելու գործի մարպին մէջ: Ապա Վեհաբանի մէջ յատուկ հանդիմանութիւն տեղի ունեցաւ, որու ընթացքին Սուրբ Գրոց Ընկերութեան ներկայացուցիչները «ՀԱՄԱ-ՊԱՏՈՒՄ»-ի օրինակներ նուէր տուին կրօնի ուսուցիչներու և ուսուցչուհիներու:

14. Նոյեմբերի 6-10-ի միջոցին կարևոր ուրիշ քաղ մը առնուեցաւ միջ-եկեղեցական յարաբերութեանց ծիրին մէջ Մեր այցելութեամբը Անգլիա, Քէնթրպրիի Արքեպս.՝ Տրթ. Ճորձ Զերիին հրաւերով, և ընկերակցութեամբ Գանատայի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտերեանի, Անգլիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եղիշէ Արքեպս. Կրկիրեանի և գաւապանակիր Հայր Բագրատ Աբդ. Գալստեանի: Անգլիոյ Թագուհիին՝ Էլիզապէթ Բ-ի հետ մեյք սեսակցութիւնը, եկեղեցական արարողութիւնները և փոխադարձ խօսքերը Ռէսքմինիստըրր հռչակաւոր եկեղեցիին և Լոնտոնի Ս. Պօղոս Մայր եկեղեցիին մէջ, սուրբ պատարագը Քէնթրպրիի Մայր Տաճարին մէջ Արքեպիսկոպոսին կողմէ մատուցուած և Մեր կողմէ տրուած քարոսը, Լամպէթի պալատին մէջ տրուած մեծ ճաշկերոյթը և մեր դասախօսական ճառը, Օքսֆորտ Համալսարանին Մեր տուած միօրեայ այցելութիւնը, Լորտերու Պալատին մէջ Մեր տուած դասախօսութիւնը "Ազգ մը որ մերժեց մեռնիլ" (A Nation who refused to die) խորագրին տակ, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կողմէ տրուած ճաշկերոյթը մասնակցութեամբ 12 երկիրներու դեսպաններուն և դեսպանութեանց ներկայացուցիչներու, ակգային բարերար՝ Պրն. Վալէ Մանուկեանի քնակարանին մէջ, եղան կարևոր դէպքեր, որոնց ընթացքին Մենք յայն առիթներ ունեցանք Հայց. Եկեղեցւոյ և մեր հայրենիքի կացութիւնն ու այժմեան հարցերը ներկայացնելու և առաւել ևս սերտացնելու երկու եկեղեցիներու և ժողովուրդներու փոխյարաբերութիւնը:

Այցելութեան աւարտին, Հայոց Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, միասնական յայտարարութիւն մը ստորագրեցինք Քէնթրպրիի Արքեպիսկոպոսին հետ, որով յայտնեցինք մեր՝ փոխադարձ կամքն ու յանձնառութիւնը առաւել ևս զարգացնելու երկու եկեղեցիներու յարաբերութիւնները գործնական գետնի վրայ:

15. Դեկտեմբերի 6-9 ընթացքին ընդունեցանք նաև այցելութիւնը Միջին Արևելքի Անկլիքան Եկեղեցիներու պետին և Երուսաղէմի մէջ Անկլիքան Եկեղեցւոյ Առաջնորդին՝ Գերաշնորհ Տ. Սամիր Բաֆիթի Եպիսկոպոսին: Դարձեալ առաջին անգամ էր, որ այդ եկեղեցւոյ պետը

կայցելէր Ս. Էքմիածին և Հայաստան: Եղաւ նաև Գիւմրի, այցելեց Խոր Վիրապի և Գեղարդայ վանքերը, եղաւ Գէորգեան Հոգևոր Ճեմարանին մէջ, ուր տուաւ դասախօսութիւն, ինչպէս նաև Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնին մէջ, ուր տեսաւ աշխոյժ գործունէութիւնը Կեդրոնի պաշտօնէութեան:

ԺԲ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԾՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄԵԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Յուլիսի 7-9-ին Հայց. Եկեղեցւոյ 1700-ամեակի Կեդրոնական Յանձնախումբի Գործադիր Մարմինը ունեցաւ իր հանդիպումը Մայր Աթոռ Ս. Էքմիածնի մէջ, ուր մշակուեցան այլապան ծրագիրներ ուխտաւորութեանց ցուցահանդէսներու, գիտական համագումարներու, հրատարակութիւններու և Հայաստանի մէջ պատմական եկեղեցիներու վերանորոգութեանց մարպետուն մէջ:

Ուխտագնացութեանց առաջինը կազմակերպուեցաւ Ուխտագնացութեանց Յանձնախումբին կողմէ, գլխաւորութեամբ Գործադիր Մարմնի վարիչ-քարտուղար՝ Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանի և Յանձնախումբի ատենապետ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի: Շուրջ հարիւր յիսուն ուխտաւորներէ բաղկացած խումբը, արտասահմանի այլապան երկիրներէ, իր ուխտագնացութիւնը կատարեց նախ, որպէս առաջին հանգրուան, այցելելով Ռումանիա, յատկապէս մասնակցելով Սուլավայի հայոց եկեղեցւոյ ուխտագնացութեան, որ կազմակերպուած էր Ռումանիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Արքեպս. Մարտիկեանի և Թեմական հոտիւորդի կողմէ: Եւ ապա ի Ս. Էքմիածին, ի Հայաստան՝ այցելելով յատկապէս Արմավիրի, Այրարատեան և Կոտայքի թեմերու շրջանները:

Ցուցահանդէսներու շարքին մէջ առաջին տեղը գրաւեց Քրեմլին մէջ (Մոսկուա) կազմակերպուած «Հայ Եկեղեցու Գաճճերը» խորագրին տակ դրուած ցուցահանդէսը, ուր, առաջին անգամ ըլլալով, ժողովուրդին ներկայացուեցան Մայր Աթոռ Ս. Էքմիածնի Մայրավանքի կրօնական արուեստի գործերէն 80 կտորներ, մեծ հետաքրքրութիւն ստեղծելով Մոսկուայի մէջ: Մէկ ամիս և մէկ շաբաթ տևող այդ ցուցահանդէսը այցելեցին աւելի քան 20.000 այցելուներ՝ ոռու, հայ և օտար պրօսաշրջիկներ:

Այդ առիթով, գեղեցիկ և տպաւորիչ հաստոր մը պատրաստուեցաւ գունազարդ տպագրութեամբ և երեք լեզուներով (հայերէն, ռուսերէն և անգլերէն) և 5000 տպաքանակով, որուն մէջ կան լուսանկարները ցուցադրուած բոլոր արուեստի գործերուն: Հայր Ներսէս արքեպս. Խալաթեանը, որ աւելի քան մէկուկէս ամիս մնաց Մոսկուա և հսկեց ցուցահանդէսին, մանրամասն զեկոյց է պատրաստած, որուն կրնան ծանօթանալ ժողովականները:

Պատրաստուած են գունաւոր մեծադիր լուսանկարներ, յուշամետալներ, դրոշմաթուղթ, յատուկ շապիկներ և այլ առարկաներ որպէս յուշանուէր 1700-ամեակի:

1700-ամեակի տօնակատարութեան կազմակերպման աշխատանքներուն մէջ ամենէն կարեւոր բնագաւառներէն մէկը հանդիսացաւ հին պատմական եկեղեցիներու վերանորոգման գործը: Այդ մարպի մէջ յիշատակելի են հետեւեալները. —

ա) Կարբիի եկեղեցւոյ վերանորոգութիւնը, ներքին յարդարումը, պարսպապատումը և երիցատան կառուցումը, բարերարութեամբ Արծանթինահայ ազգային բարերար Տէր և Տիկին Արմէն և Սիրանոյշ Մեծատուրեան-Արզումանեանի: Սւարտուած է գործը: Ապրիլին տեղի կ'ունենայ օծումը:

բ) Սևանայ կղզիի Ս. Կարապետ և Ս. Սոաքելոց վանքերու վերանորոգումը, բարերարութեամբ Տէր և Տիկին Սարգիս Սուլթանեանի: Գործը ընթացքի մէջ է:

գ) Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ վերաշինութիւնը, բարերարութեամբ Տանիմարքայի Միսիոնարական կազմակերպութեան: Գործը այժմ արագ ընթացքի մէջ է:

դ) Յաջող ընթացքով կը յառաքանայ Ամաղուի Նորավանքի եկեղեցւոյ արմատական վերականգնումը, որու բարերարներն են Մոնթրէպէն Տէր և Տիկին Տիգրան և Տիանա Հաճէթեանները:

ե) Այժմ կը պատրաստուին, և իրենց վերջնական փուլի մէջ են Մուղնիի Ս. Գէորգ եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքային ծրագիրները. մօտ ատենէն կը սկսի վերանորոգման աշխատանքը:

յ) Կը պատրաստուին նաև աշխատանքային փլանները Սանահինի, Կեչառիսի և Հառիճա վանքի եկեղեցիներուն: Բարերարները ապահովուած են արդէն:

է) Եփրակի Թեմի մէջ մօտ օրէն կը սկսին վերանորոգման աշխատանքները Ապատան գիւղի եկեղեցիին, որու բարերարն է Լիբանանահայ ազգայիններէն պրն. Յարութիւն Սպանեան:

Այս և նման այլ աշխատանքներու համար յատուկ պատասխանատուութեամբ պաշտօնի է կանչուած ճարտնարապետ և յուշարձանային շինութեանց մասնագէտ պրն. Հրաչ. Գասպարեանը, որ կը ղեկավարէ ընդհանուր աշխատանքը գործակցութեամբ Մայր Աթոռի շինարարական բաժանմունքի ղեկավարներէն պրն. Յակոբ Բաբախանեանի և այլ օգնականներու: Այն մարդի մէջ սերտ գործակցութեան ընթացք կայ 1700-ամեակի պետական Յանձնախումբին և Յուշարձաններու Պահպանութեան Կոմիտէին Մշակութային նախարարութեան հովանաւորութեան տակ գործող:

Անցնող տարիներուն կատարուած նախապատրաստական աշխատանքներու և ծրագրումներու մասին ընդարձակ տեղեկագիր մը պատրաստուած է Գործադիր Մարմնի Գրասենեակի վարիչ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանի կողմէ, զոր կը դնենք տրամադրութեան տակ ժողովականներու համար ի տեղեկութիւն:

ԺԳ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Լեցուն եղաւ նաև Մեր գործունէութեան մէջ այս բաժինը: Ունկնդրութիւններ տուինք և հանդիպումներ ունեցանք օտար պետական, քաղաքական, միջազգային դիւանագիտական անձնաւորութիւններու և պատուիրակութիւններու, որոնք Հայաստան եկան և պարտք համարեցին այցելել Ս. Էրմիածին և տեսակցիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ: Կը յիշատակենք ամենէն կարևորները. —

- Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարար Էրվէ տը Շարիթ (2 Ապրիլ):

- Միացեալ Նահանգներէն քոնկրէսմէն Ճորճ Ռատանովիչ (2 Ապրիլ):

- Յունաստանի Արտաքին Գործոց Նախարար՝ Թէոդորոս Պանգալոս (9 Ապրիլ):

- Ռուսաստանի Դաշնութեան Պետդումայի (խորհրդարանի) պատուիրակութիւնը (9 Ապրիլ):

- Ռուսաստանի Դաշնութեան քաղաքական ծանօթ գործիչ Ալեքսանտր Լեբեւ (22 Ապրիլ):

- Դամասկոսի (Սուրիոյ մայրաքաղաք) Նահանգապետ Մուհամադ ՉԹաղիպի (24 Ապրիլ):

- Ուկրաինայի Ազգային Ժողովի նախագահ՝ Ալեքսանտր Մորոզ (26 Մայիս):

- Յունաստանի Զինուորական ոյժերու պատուիրակութիւնը Պաշտպանութեան գլխաւոր շտաբի պետի՝ Չորավար Աթանասիոս Չուզանիսի գլխաւորութեամբ (19 Յունիս):

- Ամերիկայի Միացեալ Նահանգներու սենատոր ձէք Ռիդ (20 Օգոստոս):

- Ռուսաստանի Պետական խորհրդարանի ականաւոր դէմքերէն և նախկին վարչապետ՝ Նիկոլայ Ռիժկով (21 Օգոստոս):

- Լիբանանի խորհրդարանի Նախագահ՝ Նապիի Պըրրի (14 Սեպտեմբեր):

- Գերմանիոյ խորհրդարանի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Գերմանիա-Կովկասեան խումբի ղեկավար Վիլլի Վիմերի (16 Սեպտեմբեր):

- Ռումանիոյ Սենատի Նախագահ՝ Պէտրէ Ռոման (1 Հոկտեմբերի):

- ԱՊՀ երկիրներու քաղաքաշինութեան նախարարներու խումբը, որոնք մեծ գործ կատարած էին Լենինականի երկրաշարժէն անմիջապէս ետք վերակառուցման աշխատանքներուն մէջ (2 Հոկտեմբեր):

- Սենատոր Ռուպըրթ Տոլը (Միացեալ Նահանգներու Նախագահութեան նախկին թեկնածու), մեծանուն բարերար Զորք Զորքորեանի հաստատած Լինսի Հիմնարկութեան նախագահ ձէյմս Ալճեանի և հայկական ֆոնդի տնօրէն Զարութիւն Սասունեանի հետ միասին (14 Հոկտեմբեր):

- Իրանի Պահապան Խորհուրդի պատուիրակությունը, գլխավորությամբ Խորհուրդի նախագահ Այաթոլլահ Սեմաու Ջանաթի (20 Հոկտեմբեր):

- Լիբանանի վարչապետ Ռաֆիք Հարիրի, իրեն ընկերակցող տասներկու հոգիներէ բաղկացած պատուիրակությամբ մը, որուն մէջ էին Լիբանանի բոլոր հայ պետական երեսփոխանները և նախարար պրն. Յակոբ Տէմիրճեանը (20 Հոկտեմբեր):

- Ուրուկուայի Արտաքին գործերու փոխնախարարը (20 Հոկտեմբեր):

- Եւրոպայի Խորհրդարանի և Մարդկային իրաւունքներու ենթա-
յանձնաժողովի պատուիրակությունը, գլխավորությամբ Լիտի Էոի (24 Հոկտեմբեր):

- Բազում երկիրներու Սահմանադրական դատարաններու նախագահներու խումբը, առաջնորդությամբ ՀՀ Սահմանադրական Դատարանի Նախագահ Գագիկ Թարութիւնեանի (24 Հոկտեմբեր):

Այս ամիսի ցանկէն դուրս կը մնան օտար երկիրներու դեսպաններու այցելությունը, որոնք եղան յաճախակի: Այսպէս, Լիբանանի, Հնդկաստանի, Միացեալ Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Հունգարիոյ, Եգիպտոսի, Սլովէնիոյ, Ռուսաստանի Դաշնութեան, Իրանի Իսլամական Հանրապետութեան, Սուրիոյ, Իտալիոյ դեսպաններու կամ հաւատարմատարներու, որոնցմէ ոմանք մէկէ աւելի անգամներ այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին և ընդունուեցան Մեր կողմէ:

Այս ցանկէն դուրս կը մնան նաև այն բազմաթիւ այցելութիւնները, որոնք կատարուեցան Հայաստանի ժողովուրդի պատասխանատու անձերու և հաստատութիւններու ներկայացուցիչներու թէ՛ պետական, թէ՛ կառավարական, թէ՛ նախարարական շրջանակներէ, թէ՛ գիտական, մշակութային, արուեստի, ընկերային ծառայութեան և այլ բնագաւառներուն մէջէն:

Ջանացինք Մայր Աթոռի բարոյական և նիւթական օժանդակութիւնը և մասնակցութիւնն ու քաջապերանքը ընծայել Հայաստանի Պետութեան և Հայաստանաբնակ ժողովուրդին:

Նոյնպէս այս ցանկէն դուրս կը մնան այն օտար և հայ ակադեմական, գիտական, բարեսիրական, երիտասարդական, ուսանողական, ուխտաւորական այցելութիւնները, արտասահմանի բազմաթիւ երկիրներէն, որոնք անցնող ամառուան ընթացքին եղան յաճախակի և բազմամարդ:

Այս բոլոր տեսակցութիւններու ընթացքին Մենք առիթ ունեցանք այցելուններուն հետ զրոյց ունենալու, ըստ իրենց հանգամանքին և պատասխանատուութեան աստիճանին, գլխաւորապէս՝

ա) Բացատրելու համար մեր Եկեղեցւոյ իրական գոյավիճակն ու ծաւալած գործունէութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածին.

բ) Պարզելու Հայաստանի և Արցախի հայ ժողովուրդին ներկայի ընկերային-տնտեսական կենսքի ծանր պայմանները.

գ) Թելադրելու, յանձնարարելու զօրակցութեան առողջ և պատուաբեր եղանակներ:

դ) Արտայայտելու մեր Եկեղեցւոյ տեսակէտները միջազգային հարցերու, Հայաստանի և այլ երկիրներու պետութիւններու միջև յարաբերութեան խաղաղ և արդար, օգտաշատ և շինարար ձևերու մասին:

ե) Պարզաբանելու Հայաստանի և յատկապէս Արցախի մեր ժողովուրդի արդար իրաւունքները, խաղաղասիրական ոգին և առկա հարցերու լուծման համար բանակցութեանց խաղաղ միջոցներ օգտագործելու անհրաժեշտութիւնը, հեռացնելու համար կարելի գինական բախումներու չարիքը:

զ) Լուսաբանելու Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց առողջ եղանակները, միշտ որպէս հրամայական ուղեգիծ ունենալով փոխադարձ հասկացողութեան, ներդաշնակ և ծրագրուած գործակցութեան, միութեան զօրացման և ամբողջական հայութեան ու անկախ պետութիւն ըլլալու սկզբունքները:

է) Մէկ խօսքով՝ մեկնաբանել վերապարթօնքի, վերականգնումի անհրաժեշտութիւնը մեր Եկեղեցւոյ և Հայրենիքի ներկայի ապատ ու անկախ Հանրապետութեան ստեղծած նոր պայմաններու յոյսին տակ:

ԺԴ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՅՔ

Մենք առիթ և միջոց չունեցանք անձամբ զբաղելու Կանոնադրութեան պատրաստութեան վերջին հանգրուաններով: Այս մասին նոր ստացանք Կանոնադրութեան Յանձնախումբի Ատենապետ Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանի ղեկոյցը: Մեր փափաքն է, որ ինք ներկայացնէ կատարուած աշխատանքը՝ անցնող ամիսներու ընթացքին: Յուսով ենք, որ այդ ընթացքը յառաջացման կարևոր քաղ կ'արձանագրէ մօտիկ ապագային, յետ Յանձնախումբի աշխատանքներու աւարտին:

ԺԵ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ - ՀԱՐՈՒԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Անցնող տասը ամիսներու ընթացքին 1 Յունուարէն 31 Հոկտեմբեր, Մայր Աթոռոյ տնտեսական կացութիւնը յստակօրէն և ընդհանուր գիծերու մէջ ներկայացուած է հաշուապահի պատրաստած ամփոփ տեղեկագրին մէջ:

Սոյն ղեկոյց-տեղեկագիրը վերջնական պէտք չէ նկատուի, որովհետև հարկ է, որ ան քննարկութեան առարկայ դառնայ վերատուգիչ Մարմնի կողմէ, 1997-ի ամբողջ հաշիւներու փակումէն ետք:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդի այս նիստին, Մենք հարկ կը վզանք ներկայացնել հետևեալ պարագաները. —

1) Եկամուտներու և Ժախսերու (մուտքի և ելքի) հաշուեկշիռը ցոյց կուտայ, որ մնայուն, ապահով եկամուտները լայնօրէն անքաւարար են ընդհանուր Ժախսերուն համար:

2) Ներքին աղբիւրները թէև արձանագրած են որոշ մասերու մէջ յաւելում, բայց ուրիշ մարզերու, յատկապէս ներքին թեմերէն եկող եկամուտներու մարզին մէջ, կպն շատ քացեր, մանաւանդ նորակապմ թեմերէն:

3) Արտաքին աղբիւրներու մէջ կ'իյնան չորս բաժիններ.

ա) Կտակներէ և հիմնադրամներէ եկամուտ

բ) Արտասահմանեան թեմերէ "Լուսաւորչի լումայ"է եկամուտ

գ) Պանքայի պահեստի գումարներէ եկած տոկոսային եկամուտ

դ) Հայ և օտար կապմակերպութիւններէ և անհատներէ ձեռք բերուած օժանդակութիւններ:

Դեռ շատ հեռու ենք հաւասարակշռուած պիտոճէ կապմելու հնարաւորութենէն: Այդ պատճառաւ Մեր քանքերուն կարևոր մէկ մասը նուիրուած են եկամուտի նիւթական աղբիւրներ գտնելու գործին, ինչ որ սպառիչ ըլլալու աստիճան լարուած և հետևողական աշխատանքի կը կարօտի:



Սրտանց կը ցանկանք ձր Գերագոյն Հոգևոր Խորհուրդի այս նստաշրջանը դառնայ նոր խթան յառաջիկայի աւելի բազմարդին գործունէութեան:

ԳՍՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

16 Դեկտեմբերի 1997

Ս. Էջմիածին